ՀԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

«Առէք Հոգի Սուրբ. Եթէ ումեք թողուցուք զմեղս, թողեալ լիցի նոցա, եթէ զուրուք ունիցիք, կալեալ լիցի» (Հովհ. Ի 22—23):

Մայիսի 22-ին, կիրակի.—Հոգեգալուստ (Պենտեկոստէ, յիսներորդ օր ի Զատկէն):

Այսօր կրկնակի ուրախության ու ցնծության օր է Մայր Աթոռ Ս. Էջմիածնում: Հոգեգալստյան տոնի ս. պատարագին Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու սպասավորության են կոչվում Մայր Աթոռի հոգևոր ճեմարանն ավարտած չորս սարկավագներ՝ Գևորգ սրկ. Աջապահյանը, Կամո սրկ. Աբրահամյանը, Սամվել սրկ. Հովհաննիսյանը և Արծվի սրկ. Գևորգյանը, որոնք նախօրոք պաշտպանել էին իրենց ավարտաճառերը և պատրաստակամություն հայտնել՝ իրենք իրենց ընծայելու ի սպասավորություն Հայ Եկեղեցու ու հավատացյալ հայ ժողովրդի:

Նախորդ օրը, մայիսի 11-ին, երեկոյան, տեղի է ունեցել «Յերեկոյէ կոչումն քահանայութեան» կարգը, խարտավիլակությամբ Տ. Արամ վրդ. Բոյաջյանի, որը վկայեց նորընծաների հոգևոր ու իմացական պատրաստականությունների ու արժանիքների մասին: Նորընծաները խոստացան «յանձն առնուլ և կատարել զամենայն հրամանս սրբոց առաքելոցն և հայրապետացն և կալ ըստ կանոնաց նոցա», «ամենայն պատրաստութեամբ և առանց ձանձրանալոյ կալ՝ ի պաշտօնն Աստուծոյ» և պահել «զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ, ընդ սուրբ Հայրապետսն ըստ նոցանից սուրբ ժողովոց»: Հավարտ քահանայական կոչման արարողության, նորընծաները հրապարակորեն արտասանեցին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու «Հաւատոյ խոստովանութիւն»-ը, ըստ Ս. Գրիգոր Տաթևացու սահմանած բանաձևի:

Հոգեգալստյան տոնի ու քահանայական ձեռնադրության առթիվ Մայր տաճարում հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Մայր տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը: Ս. պատարագը շարունակվեց մինչև «Զի ողորմած և մարդասէր ես Աստուած» աղոթքը, որից հետո խարտավիլակ Տ. Արամ վրդ. Բոյաջյանը նորընծաներին առաջնորդեց Ավագ խորան, ուր նրանք, հոգևորականներին ու հավատացյալների բազմությանը դառնալով, բարձրացրին իրենց ձեռքերը՝ ի նշան աշխարհից հրաժարման:

Հրաժարման պահից ու «Աստուածային և երկնաւոր» շարականից հետո նորընծաները դեմքով շրջվեցին դեպի Ավագ սեղան, և ձեռնադրող սրբազան հայրը, ընթերցելուց հետո ձեռնադրության մեծ աղոթքը, խաչաձև «Դնէ զաջն ի վերայ գլխոյն նուիրելոյ»: «Հաւատամք»-ից «Ողջոյն տուք միմեանց» և «Խորհուրդ խորին» շարականից հետո ձեռնադրության հանդիսավոր արարողությունը հասնում է իր հոգևոր վերացման սրբազան բարձունքին. սկսվում է օծման խորհրդավոր արարողությունը: Գերաշնորհ սրբազան հայրը մեկ առ մեկ սրբալույս մեռոնով օծում է նորընծաների ճակատն ու ձեռքերը, վերանվանելով՝ Գևորգ սրկ. Աջապահյանին՝ Տ. Միքայել քահանա, Կամո սրկ. Աբրահամյանին՝ Տ. Վրթանես քահանա, Սամվել սրկ. Հովհաննիսյանին՝ Տ. Նաթան քահանա, Արծվի սրկ. Գևորգյանին՝ Տ. Թադեոս քահանա:

Դառնալով ժողովրդին, նորընծաները տալիս են իրենց անդրանիկ օրհնությունը՝ «Խաղաղութիւն ամենեցուն»:

Ապա պատարագիչ սրբազան հայրը, շնորհավորելով նորընծաներին, բովանդակալից քարոզ է խոսում՝ «Առաքելոյ աղաւնոյ իջանելով մեծաձայն հնչմամբ ի բարձանց մինչդեռ նստէին ի սուրբ Վերնատունն» (շարական) բնաբանով:

Նույն նորը, երեկոյան, տեղի է ունենում Տ. Միքայել քհն. Աջապահյանի, Տ. Վրթանես քհն. Աբրահամյանի ու Տ. Նաթան քհն. Հովհաննիսյանի կուսակրոն քահանայության խորհրդանիշ վեղարի տվչության արարողությունը: